

# ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ\*

№ 174

ԿՈՆԴԱԿ

Թերեր՝ 1.—Սնաւոյթուն՝ 225,2×33,5 սմ.:—  
Նույր՝ դիղնած և կելոտուած հասա թուղթ:—Վիճակը՝  
անբավարար, տեղ-տեղ պատոված: Կոնդակի սկզբի ժա-  
ւը կացված է կարմիր գույնի ծաղկավոր շորի վրա:—  
Գուրույնը՝ միայնուն:—Տողեր՝ ընդամենը 142:—  
Գծամները՝ նշշամով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդարու-  
թանք՝ անկաման շրջանի մի նմուշ է: Ոմի հասարակ  
սկարներ, ինչպես թոշոն, որի բերնում կա ծաղկավոր  
երեք չոյուղ, երկու հրեշտակ, երկու մարդ, որոնցից մե-  
կը մորուավոր, հավանաբար քահանա, Ս. Գևորգը ձի  
հեծած սպանուած է վիշապին, Ս. Գևորգա վանքը, ծաղկե-  
ներ և ալլ: Սկզբում կա միայն մի հաս թռչնագիր  
(ի): Կոնդակի երկու կողմերում կա երկու լուսանցք,  
նկարված կանաչ ջրաներկով:—Գրիշը և ծաղկողը՝ վա-  
նեցի Սննեցերիմի որդին Սիմեոն:—Պատվիրատուն՝ Ս.  
Գևորգ վանքի վանահայր Ստեփանոս վարդապետ:—Ժա-  
մանակը՝ 12 սեպտեմբերի 1844 թ:—Վայրը՝ Սոկաց  
շրջանի Փութիր Ս. Գևորգ վանք:—Մանրայրուն՝ սույն  
կոնդակը ստացվել է Վեհափառ Հայրապետի միջոցով  
1960 թվականի հունվար ամսին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևմտահայաստանի Սոկաց շրջանի  
Փութիր Ս. Գևորգ վանքի համար գրված մի  
կոնդակ է սա, նյութական միջոցներ հանդա-  
նակելու մասին:

«Ի գերագոյն և գերապայծառ, ի հրաշալի և  
ի հրաշափառ, սրովքէածեմ քրովքապը Աղի-  
նասարաս և երկնանման Սոկաց Փութիր  
Սրբոյն Գէորգայ գերահողակ տաճարէս և ա-  
մենամաքուր և արագահաս սրբոց նշխարացն  
նորին և այլ ամենալն սրբոց մասսանց որք ի  
Փութիր Սրբոյ Գէորգայ տաճարս ամփոփեալ  
կան»:

Կոնդակը գրված է նույն վանքի վանահայր  
կողմից և սկսում է այսպես.

«Եւ ի սոցին սպասաւոր և պաշտօնեալ ի  
Տէր Ստեփանոս մեղապարտ վարդապետէ  
յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան և  
նամակ պահպանութեան...»:

Կոնդակն ուղղված է այցելու առաջնորդնե-  
րին, եպիսկոպոսներին, վարդապետներին,  
քահանաներին, սարկավագներին, իշխաննե-  
րին, մելիքներին, ուսերին, վաճառական-  
ներին, արհեստավորներին, մահտեսիներին  
և առհասարակ բոլոր ժողովրդյան, ժերերին  
և երիտասարդներին:

\* Տարունակված «Հայմիածին» ամսագրի 1960 թվա-  
կանի № № Ե-ից, Լ-ից, Թ-ից, 1961 թվականի  
№ № Բ-ից, Գ-ից, Զ-ից, Թ-ից, ԺԲ-ից, 1962 թվականի  
№ № Ը-ից, Թ-ից, Ժ-ից, Ժ-Ա-ից, ԺԲ-ից և 1963 թվականի  
№ Բ-ից:

Հանգանակությունը կատարելու են երկու  
քահանաներ.

«... և այլ ամենայն բանին և գործին յաջո-  
ղութիւն տացէ և ննջեցելոց ձերոց յերկնային  
արքայութիւն պարզեցնեցէ, եկեղեցեաց ձերոց  
հաստատութիւն և բարեկարգութիւն տացէ,  
քահանային ձեր ըստ քահանայիցն Եղիազարու  
և Սելջիսեղեկի օրհնեցէ...»:

Ապա խոսվում է Ս. Գևորգ գորավարի մա-  
սին, ինչպես նաև Ս. Գևորգ վանքի Հիմ-  
նադրման մասին:—

«Դարձեալ սուրբ հայր մեր Սուրբ Յակոբ  
հայրապետն Մծանայ առեալ զուրբ գլուխն  
Սրբոյն Գէորգայ զօրաւարին եղի մէջ Պուտկի  
և եկեալ ի լեառն եղերով Խոյիթ բառի կոչի  
և անդ հաճեցաւ սուրբ հայրն մեր աղօթեաց  
ի լեառն այն և Աստուծոյ ազդեցութեամբն  
ամփոփեցաւ գլուխն Սրբոյ Գէորգայ ի մէջ  
վիմին. վասն այնորիկ կոչի Փութկի Սուրբ  
Գէորգ, որ է երկիրն Մոգաց: Եւ պարոնն Մո-  
գաց Սիր Հասան զոր ի բարձրաւանդակ ամ-  
րոցն յաւուր միում գիշերն նստեալ կայր  
հանդերձ նախարարօրքն ետես զլոյսն պայ-  
ծառ իշեալ ի վերայ վիմին և ծանուց իւր  
աղանդիցն և կոշեաց քրիստոնէիցն, հրա-  
մաեաց, զնացին և գտին զգլուխն Սրբոյ Գէոր-  
գայ ի վիմին և շինեցին հրաշագեղ վանք մի,  
և առնէ բազում զսքանելիս մինչև ցալսօր...»

Վերջում խոսվում է հանգանակության մա-  
սին.

«... որ և հայցեմք սիրելեաց զի ի ի գալն  
սիրելուոյ մերոյ ծառային, թէպէտ ումիկ է,  
բայց յոյժ հաւատարիմ ծառայ գոլով, լոկար  
զդա ի մէնջ աստուածասիրութեան ձերուա  
լաւ առատօրէն ողորմութիւն իմն շնորհիցիք  
զի ամենայն իրաց պակասութիւն ունի սուրբ  
վանքս...»:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կոնդակի ներքեսում կարմիր շրջանակի  
մեջ)

Ի յամի Տեառն 1844 և ի ԽՄՂԴ թովականին  
Հայոց ի սեպտեմբերի 12 (Հ-ը գրված է արա-  
բական թվանշանով) օրին գրեցաւ նորոգ  
կոնդակս օրհնութեան: Յիշատակ է գանձա-  
կապետ Ոստանցի Յարութենի որդի Կազարին  
և իւր ծնողաց հոգին երկնային արքայութեան  
արժանի եղիցի, ամէն:

(Կարմիր շրջանակի ձախակողմյան կող-  
մբ).

Այլ և յիշման արժանի համարիշք զգրա-  
գիր սորին վանցից Սինաքարիմի որդի Սի-  
մէօնս, որ բազում աշխատութեամբ զժա-  
գրեաց ի սէրն սույն Սրբոյն Գէորգայ զօրա-  
ւարին, որ և ինքն առ Տէրն մեր Յիսուս Քրիս-

տու Աստուած օդնեսցէ մեզ և ձեզ ամէնէց ցուն, ամէն:

### № 175

#### ՏԱՂԱՐԱՆ

Թերերեր՝ 222.—Պրակիներ՝ 21, յուրաքանչյուրը զանազան մեծությամբ, բաղկացած 8, 12, 16 և այլն թերթերից:—Մեծուրյունը՝  $17 \times 11 \times 4,5$  սմ.:—Նյուրը՝ թուղթ:—Կազմը՝ կաշեպատ տախտակ:—Պահպանակներ՝ սկզբից երկու, իսկ վերջից մեկ թերթ:—Վիճակը՝ լավ:—Գրուրյունը՝ միասյուն:—Տողեր՝ 13:—Գծումներ՝ յատիտով:—Գիրը՝ նոտրգիր:—Զարդագրուրյուն՝ կան տերունական վեց նկարներ (թ. թ. 4թ, 41թ, 89թ, 116թ, 131թ և 158թ) և վեց խորաններ: նկարները հասարակ են, սակայն բավականին հաջոր: Կան սակավ թուղթ թերթերու: Գործածված է միայն շրաներկր:—Գրիշը՝ Հակոր Զազարյանց Պապով:—Ժամանակը՝ 27 հունիս 1835 թ.:—Վայրը՝ Աստրախան:—Մանորայրյուն՝ սույն ձեռագիրը նվեր է ուղարկված Մոսկվայից, Տիկին Վերա Պավլովա Ռուգարովայի կողմէց:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 3ա:—Տաղարանս յօրինեալ ի զանազան բանասիրաց, յորում պարունակին ամենայն տաղը եկեղեցւոյ և ուրախութեան, ի հայրապետութեան Տեառն Յովհաննու արժանընտիր Կաթուղիկոսի ամենայն հարոց, և յառաջնորդութեան Սերովքէի արքեպիսկոպոսի և ասպետի: Գրեալ է յաստրախանարքնակ հայ Յակովբայ Զազարյանց Պապովայ, ի 1835 ամի յուլիսի 27, յԱստրախան:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2թ:—Ի գրոց Յակովը բահանալի Պապովեանց Ալշարխանցւոյ, № 31:

### № 176

#### ՔԱՐՈՉԳԻՐԸ

Թերերեր՝ 20:—Պրակիներ՝ 2, յուրաքանչյուրը 10 թերթից:—Մեծուրյունը՝  $21,3 \times 17,2 \times 0,3$  սմ.:—Նյուրը՝ կապտավլուն թուղթ:—Կազմը՝ լոնի:—Պահպանակներ՝ չկան:—Վիճակը՝ բավարար:—Գրուրյունը՝ միասուն:—Տողեր՝ 20:—Գծումներ՝ ձնշումով:—Գրիշը՝ նոտրգիր:—Զարդագրուրյուն՝ կան գեղեցիկ երկու թռունագրեր, երեք զարգացրեր և մի քանի զարդանականներ:—Գրիշը՝ անհայտ:—Ժամանակը՝ ժթ: պար:—Վայրը՝ անհայտ:—Մանորայրյուն՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխով:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա:—Երանելոյն Անանիայի հայոց վարդապետի ի խորհուրդ Յօնանու մարգարէի:

Թ. 6թ:—Յաղագս բանին Աստուծոյ տնօրինական խորհրդոցն բացայալութեան, որք ի Ցովնան նկարեցան:

Թ. 12ա:—Քարոզ յանտիքն հրեշտակապետին առ կոյսն Մարիամ, ի բան Սրբոյ Աւետարանին, և յամսեանն վեցերորդի առաքեցաւ (այստեղ կա անընթեռնելի մի նշան):

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 15ա:—Աւարտ բանիս՝ եղին գլուխալ: Միշտ անդադար՝ աշխատեցեալ:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա:—Արքահամ:

Թ. 17թ:—Միշտն զու ևս ճոխ փարթամ:

Ունիս բազում բարեկամ:

Վասն սիրոյն փարթուեան:

### № 177

#### ՔԱՐՈՉԳԻՐԸ

Թերերեր՝ 107:—Պրակիներ՝ 8, անհամաշափի:—Մեծուրյունը՝  $24,8 \times 17,5 \times 1,5$  սմ.:—Նյուրը՝ հասարակ սպիտակապի:—Կազմը՝ լամպակալ ստվարաթուղթի:—Պահպանակները՝ սկզբից 3 թերթ թուղթ, իսկ վերջից՝ 1) հատ:—Վիճակը՝ բավարար:—Գրուրյունը՝ միահամն:—Տողեր՝ 23—26:—Գծումներ՝ առանց ճնշման:—Գրիշը՝ նոտրգիր:—Զարդագրուրյուն՝ չունի:—Գրիշը՝ Հակոր Զակուռ եպիկոպոս Թոփուզյանց:—Ժամանակը՝ ժթ: գ:—Վայրը՝ Վանա Լիմ անապատի Ս. Գևորգա վանի:—Մանորայրյուն՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխով: Զենապգիր հայտնի չէ, թի ո՞վ է գրիշը և ո՞րոնէ է գրուրյան վայրը: Մատյանում կան երեք ձեռագիր նամակներից մին հասցեագիր հանված է Վանի հշխանակության նպատակով, որպեսի հոգավոնի կողմէց կայսեր կիմ անապատի Ս. Գևորգ վանենորոգության ծախսերը: Հանգանակության համար ուղարկվում է նույն անապատի միաբան Պաղտասար վարդապետը: Նամակը վերջանում է այլպես:—«Մեամ զան ձեր աղջու օրնենալ կենաց պայծառութեան միշտ անմոռաց ազօթող Ս. Տ. և Լիմ Սուրբ Անապատի գլուխալ վանահայրը ծակոր եպիսկոպոս Թօփուզանց: 1878 օգոստու 15, ի Վան, ի Լիմ ժովածքար Սուրբ Հէկորդաքայր: Նամակի և սույն ձեռագրերի գրության ոճը նույն է: Հավանաբար սույն ձեռագրի գրիշն էլ հանդիսանում է նույնինքն Հակոր համիկոպոսը, կիմ անապատի վանքում:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 160ա:—Մելան փործեցի նոյին էէ:

Թ. 106թ:—Քարտէղ փործեցի:

### № 178

#### ՔԱՐՈՉԳԻՐԸ

Թերերեր՝ 151:—Պրակիներ՝ 15, յուրաքանչյուրը՝ 8—12 թերթից:—Մեծուրյունը՝  $25 \times 18,5 \times 1,5$  սմ.:—Նյուրը՝ հասարակ սպիտակ թուղթ:—Կազմը՝ ստվարաթուղթ:—Պահպանակները՝ սկզբից 5 թերթ թուղթ, իսկ վերջից՝ 3 հատ:—Վիճակը՝ բավարար:—Գրուրյունը՝ միահամն:—Տողեր՝ 26—30:—Գծումներ՝ ճնշմանով:—Գրիշը՝ նոտրգիր:—Զարդագրուրյուն՝ չունի:—Գրիշը՝ Հակոր Զակուռ եպիկոպոս Թոփուզյանց:—Վանենորոգության ծախսերը:

Պաղտասարի վարդապետ Երևանցի և Գևորգի՝ ժամանակը՝ մի ժամանակ՝ վայրը՝ շատ հավանաբար կիմ անապատի Սուլք Գևորգա վանքը՝ Մանուկյան՝ սույն ձեռագիրը բաժանված է հինգ մասերի՝ ա. թ. թ. 6ա—55ա, թ. թ. 60ա—65թ, գ. թ. թ. 70ա—117թ, դ. թ. թ. 136ա—141թ, ե. թ. թ. 144ա—148ա, թ. 58ա-ում գրված հիշատարականից երկում է, որ թ. թ. 6ա—55ա մասը գրված է Պաղտասար վարդապետ Երևանցու կողմից, իսկ թ. թ. 70ա—117թ բաժինը՝ Գևորգ գրչի կողմից: Ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 58ա.— Ըստ կանոնակիր ընթերցմանց իրատախառն բանիցն որ ի վեր, և ընդունելոյ զհոգոց զօվացուցիչ աղբերց ջրոյ կենդանութեան յաէժախաղաց յովկիանոսէ իմաստութեան Հոգույն Սրբոյ որ ի յԱստուածաշունչ մատենի. ներել մախթեմ վերծանող և շնորհապերն արնիրուն յեղարցդ. սղալանացն որ ի սմաթէ տառից թէ բառից և թէ եղծմանց. ճիշտ տեղեկանալով զիրողութեանցն պատճառ: Մինչն զի յանվարժ քերական իմաստայարդար արհեստից գրչէ ումեմնէ գրեալ և այժմ ի նորին օրինակէ գաղափարեալ (թէ պատշաճ էր սրբագրել և ապա գրել, բայց անձնական տկարութիւնս ոչ ներեաց): Երկրորդ՝ տեղույս կարգաց ծանրութիւն և քոնահատութիւն ոչ տայր տեղի զուարձազուարթ չէտի. և վայրկենի, զի աշալուրճ հսկողութեամբ մանրանկատ խուզարկմամբ արտագրեցէր: Երրորդ՝ գրեցաւ ի համառօտ երբի:

Վասն որոյ խնդրեմ ներող գտանիցիք:  
Մնամ աղօթարար՝

Պաղտասար վարդապետ Երևանցի:

Թ. 117թ.— Վաղճան գրքոյս:

Զգրեալսն յորժամ ընդեռնուա անդ յիշեսցես զԳէորգ հանգուցեալ ի Քրիստոս:

### № 179

#### ՔԱՐՈՉԳԻՐՔ

Թերքեր՝ 98:— Պրակենը՝ 10, յուրաքանչյուր՝ 10-ական թերթից, բացի մեկից՝ Մեծուրյանը՝ 25×18,5×1 սմ.:— Նյուրը՝ բարակ թուղթ:— Կազմը՝ սովարաթուղթ:— Պահպանակներ՝ սկզբից 4 թերթ թուղթ, իսկ վերջից՝ 19:— Վիճակը՝ բավարար:— Գրույրյանը՝ միասյուն:— Տողերը՝ 26—30:— Գծումները՝ մշշումնով:— Գրը՝ նորոգիր:— Զարդարույրյան՝ կան մի քանի հատ հասարակ և անարժեք թոշնագրեր և մի հատ էլ ձկնագիր:— Գրիչը՝ Մատթեոս սարկավագ:— Պապվիրանուն՝ Պաղտասար վարդապետ Երևանցի:— Ժամանակը՝ 1869 թ.:— Վայրը՝ շատ հավանաբար կիմ անապատի Ս. Գևորգ վանք:— Մանուկյան՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից: Ձեռագիրը բաժանված է երկու մասերի՝ ա. թ. թ. 5ա—48թ, թ. թ. 69ա—79ա, թվում է, թե վերջին այս երեք ձեռագիրը քարոզքքերը (№ № 177, 178 և 179) պատկանելիս են եղել մի մար-

դու, և գրվել են նույն վայրում՝ այսինքն Վանա կիմ անապատի Ս. Գևորգ վանքում:

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 5ա.— Քարոզգիրք.

Համբենտիր հաւաքեալ ի մեծանուն հեղինակաց քարոզողաց բանին Աստուծոյ յԱնդրիանուալուսեցի Տեառն Աստրուէ զերապատիւ արքեպիսկոպոսէ, և հոչակավոր քարոզչէ յեկեղեցիս Կոստանդնուպոլսոյ և մի գիրք բովանդակեալ ի նմանէ ի Ուռումէլի տղեկին Կոստանդնուպոլսոյ:

Եւ արդէն օրինակեալ ի բուն մատենէ անտի ձեռամբ նուաստ Մատթէոս սարկաւագի, ի վայելումն հոգեշնորհ Բաղդասար վարդապետի ծրեանցւոյ և լուսարարի սրբոյ ովասի:

Եւ ի հայրապետութեան Տեառն Տեառն Գէորգայ Աստուածարքնտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Եւ ի առաջնորդութեան Սրբոյ Անապատիւ Տեառն Աստուածարքնտիր Յակոբ սրբազն արքեպիսկոպոսի վանեցւոյ:

Եւ ի մարգեղութեան Բանին Տեառն 1869. և ի թուականութեան Յարեթեան սեփու 1318.

և ի հոգտեմբերի թ համարի:

Թ. 78ա.— Աւարտ բանիս եղել գրեալ.

Ճիշտ անդադար աշխատեցեալ:

### ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 82թ.— Քարտէղ փորձեցի:

### № 180

#### ԺՈՂՈՎԱԾՈՒ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ

#### (Հայատառ տանկերեն)

Թերքեր՝ 238:— Պրակենը՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից:— Մեծուրյանը՝ 21,7×18×2,5 սմ.:— Նյուրը՝ բարակ թուղթ:— Կազմը՝ սովարաթուղթ:— Պահպանակները՝ սկզբից և վերջից երկուական թերթ կապուտ թուղթ:— Վիճակը՝ բավարար:— Գրույրյանը՝ միասյուն:— Տողերը՝ 16:— Գծումները՝ սկզբից թղթերը տպված են գծակորու:— Գրիչը՝ շեղագիր:— Զարդարույրյան՝ չկա:— Գրիչը՝ Ղարաբաղի Թաղար դյուղացի աշուղ Ռուսական:— Պատվիրանուն՝ Վահան սարկավագ:— Ժամանակը՝ Ժ. գ.՝ Վայրը՝ անհայտ:— Մանուկյան՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 238ա.— Աստուած ողորմի ասողների գամ լսողների ծնողացն:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- թ. 1ր.—Թաղլարեցի աշըզ թուստամբ աշխատութիւնը Վահան սարկաւագին նուիրած:
- թ. 140ա.—1870 ամի:
- թ. 148ա.—1872 ամի:
- թ. 157ա.—1871 ամի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զեռագիր մատյանիս 2ա—228թ էջերում գրված կան ընդունենք 228 աշուղական երգեր, մեծագույն մասը հայատառ սաճկերենով, իսկ միայն ինն էջեր գրված են հայերեն լեզով (148ա, 148թ, 157ա, 163թ, 166թ, 175ա, 190թ, 192թ և 201ա), որոնցից առորեա արվում է միայն երկու էջ, որպես նմուշ, ինչպես նաև տաճկերեն երգերի հայերեն գրված վերնագրերից մի քանիսը (կամ մոտավորապես 36 հատ): Սույն երգերը ունեն հայրենասիրական, բնարական, եկեղեցական և այլ բովանդակություն, գրված աշուղական ոճով: Շատ հավանաբար սրանք հորինված են Ժիրի կեսերին և մի ամբողջական ժողովածուում հավաքված ժիրի դարի երրորդ քառորդում:

թ. 4ա.—Գովասանդ դիւանի եկեղեցու վերաբ:

թ. 6թ.—Դիւանի նամարտ մարթի վերա:

թ. 12թ.—Դիւանի հըրէշտակաց վերա:

թ. 14ա.—Դիւանի երորթութեան վերա:

թ. 61ա.—Գովասանք ի վերա եկեղեցու վերաբ:

թ. 70թ.—Աղաշանք քանինն գիրիցըն:

թ. 74թ.—Աշխարին մարթի վերա:

թ. 75ա.—Ժամանակի մարթի վերա:

թ. 80թ.—Մարթի սիրդի գամ միթգի վերա:

թ. 85ա.—Գովասանք Քրիստոսի հրաշաւործութիւնի վերա:

թ. 85թ.—Աշխարի վերա:

թ. 89ա.—Երորթեան վերա:

թ. 90թ.—Զարկեար օղի Բարին մեռնելին վերա ասած:

թ. 93ա.—Աղվես մարթի վերա:

թ. 95ա.—Գովասանք խուզորտէցի մեգ Ղազար անվան դի վերա:

թ. 98ա.—Գովասանք Տումա գէղի վերայ:

թ. 100ա.—Գովասանք ի վերա Վահանի (Սույնը և 101ա-ում և 102ա-ում):

թ. 103թ.—Թաղլիս աշըզ Ղազարի վերա:

թ. 119ա.—Երատ:

թ. 125ա.—Մարթի կամ կնկան սրի վերա:

թ. 138.—Զեր մարթի վերա:

թ. 143թ.—Էսպից աշղ թուստամբ առաջնկաւ:

թ. 144թ.—Էլի ըսպից թուստամբ:

թ. 146ա.—Թուստամբ այս թաղիսըն ասից բատախիսն:

թ. 147ա.—Ետով թուստամբ շակրիդին ասից այս խոսպըն:

թ. 153ա.—Էսպից թուստամբ առաջնին ընկաւ:

թ. 172ա.—Նորաթթը եզաւ աշըզ թուստամբն ըսպից առաջին ասէլ:

թ. 176ա.—Գովասանք Գիրիգոր քոխի վերա թաղլար գիրիցիցի:

թ. 177թ.—Գովասաք նշանագուրութան վերա:

թ. 179թ.—Գովասանք օրնութանք նոր հարսանէք արած դղի կամ հարսի վերա:

թ. 194ա.—Ախչիկը իւր հայր աշըզ թատամբը եռթին ասից աշըզ թատամբը եռթին աշակերտները երգալաւ քնաց զարկեար օղին մոտըն ըսպէցէն աշակերտները կամ ինքը խոսէլ:

թ. 196ա.—Էսպից աշակերտըն ասէլ:

թ. 197ա.—Էսպից Զարկեար օղին առաջին ասէլ այս խոսդին:

թ. 199թ.—Էսպից Զարկեար օղին այս խոսդ ասից, Մամար զատին մնաց գապված:

թ. 202թ.—Էլի ըսպից ճղացընն:

թ. 148ա.—Գոկուշմ (1872 ամի):

Էլի մին անքամ գնացէնք աշըզութեան դործի կոկչի մը հալ ես աշըզ թուստամ գամ մէկ հնկեր և իմ երախան կոկչի մը հալ ման եկէնք գնացէնք Տիլիշան անվան շըհարն մէկ դան զննադ ընկինք մնացինք առավոտեան իմ որթի Կարապատըն սազն վեր գալաւ գնաց բազարի տուքաններըն ման գալ մէկ քանի դորէանում խազ գասի ծայնն շատ գը սիրէն շըհարի մահլաններու մը մէկ աշըզ գը լինի նալ անելիս անոննը Մեհրաբ օսմանու մեր երախան զըքըննա տէսնա մէկ աշըզ նազլ անէլիս աշզըն մեր երախին նազըն գառնի և գոնիլի երախին վերա երախան զըքա ինծ մոդ թէ սազըս մէկ օսմանլու աշըզ առաւ և ես թուստամ գընացի աշըզին մոտ ասացի ուստա այլ երախին սազըն տուր իւրան քնի իւր գործին սազնա սասց երախան թէկ ինչ է ես թուստամխաննեցի սաէցի երախան իմ որթի է (թ. 148թ) և իմ աշակերտ է ընա սասց թէ տու աշըզ էս ես սասցի հրամաք աշըզ էմ ետով սաէց թէ անոննա ինչ է սասցի թէ զարարաղցէ թաղլու թուստամ էմ ես սասցի թէ քու անոննա ինչ է ընա բատասխանէց թէ օսմանլու Մեհրաբն էմ, գասէմ ուստա Մեհրաբ այս երախիտ սազն տուր իւրան սաէց որ աշըզէս գընա քու սազս ընկ թէկ հնտամ, ժողովուրթն սասցին թէ թէթէ է խոսիք, գնացին իմ սազըս բըրին մին և սազըս գուս օնիլըն ինքն առաջ ընկաւ ըսպից ասէլ (Հաջորդ էջերում կա իր երգած երգը):

## № 181

## ՉԱՅՆԱԳՐԵԱԼ ՊԱՏԱՐԱԳ

Թերեւը՝ 175.—Պրակիներ՝ 15, յուրաքանչյուրը 12 թէրթից:—Մեծուրյունը՝ 22,1×17,5×1,8 սմ.:—Նյուրը՝ դեղնած բարակ թուղթ:—Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ, որի առաջին երեսի վրա ճնշումով գրված է «Զայնագրեալ բառակ» տրոյ պատառ սպիտակ:—Պահպանակներ՝ սկզբից և վերջից մեկական թէրթ թուղթ:—Վիճակը՝ մի քիչ բայցայված:—Գրուրյունը՝ միայնուն:—Տողեր՝ 20—21:—Գծումներ՝ սկզբից էջերը ապված են գծավորութիւն:—Գիրը՝ շեղագիր և հայկական խաղեր:—Զարդագրություն՝ չկա:—Գրիշը՝ դպիր Բախչի Տէր-Գրիգորեան Տէր-Մարտիրոսյանց:—Ժամանակը՝ 8 փետրվարի 1899 թ:—Վայրը՝ Թաքու:—Մանուկյանցից սույն ձեռագիր մատյանը նկեր է ստացված Մոսկվայից:—Արժանապատիկ Տ. Խաչատուր աւագ քահանա Տէր-Հաւությունցից կողմից:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա:— Զայնագրեալ բառաձայն երգեցողութիւնը սրբոյ պատարագի: Դէմիր Բախչւոյ Տէր-Գրիգորեան Տէր-Մարտիրոսյանց: Ներդաշնակութիւն Մ. Եկմալիեանի: 8 թ 99 թագու (այսինքն 8 փետրվարի 1899 թ.):

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա—Սուրբ Էջմիածնայ գրադարանին: Առյուն ձեռագիրը նւիրում եմ ի լիշտակ իմ հարազատ ընկերուց Բախչի Տէր-Մարտիրոսյանից, ի Տէր Հանգեաւ 1954 թ. 5 նոյեմբեր: Մոսկաւ:

Խաչատուր բահանա Տէր-Յարութիւններց: 1 փետր. 1955, Մոսկաւ:

Թ. 1բ.—Քամար (4) սեփական տետրակներից:  
Թ. 175-րդ դիմաց (կոնակի կաղմի ներսի երեսում)՝ Գրիգոր քահանա Տէր-Մարտիրոսյանց:

## № 182

## ՔԱՐՈԶԳԻՐՔ

Թերեւը՝ 107.—Պրակիներ՝ 9, յուրաքանչյուրը 12 թէրթից:—Մեծուրյունը՝ 21,8×13,8×1,2 սմ.:—Նյուրը՝ դեղնած բարակ թուղթ:—Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ:—Պահպանակներ՝ վերջում կա 20 թէրթ թուղթ:—Վիճակը՝ սկզբից և վերջից թիրի:—Գրուրյունը՝ միայնուն:—Տողեր՝ 28:—Գծումները՝ թուղթը ինքնին գծաւոր է:—Գիրը՝ շեղագիր:—Գրիշը՝ նահայտ:—Ժամանակը՝ ժմ: ու:—Վայրը՝ անհայտ:—Մանուկյանցից սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

## № 183

## ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Թերեւը՝ 80.—Պրակիներ՝ 2, յուրաքանչյուրը 40 թէրթից:—Մեծուրյունը՝ 22×18×0,7 սմ.:—Նյուրը՝

բարակ թուղթ:—Կազմը՝ մոմաթուղթ ծածկված ստվարաթուղթ:—Պահպանակներ՝ սկզբից և վերջից մեկական թէրթ թուղթ:—Վիճակը՝ մի քիչ բայցայված:—Գրուրյունը՝ միայնուն:—Տողեր՝ 19:—Գծումները՝ թուղթը ինքնին գծաւոր է:—Գիրը՝ շեղագիր:—Գրիշը՝ Ալ. Մուրատրենցիան:—Ժամանակը՝ 1890-ական թվականները:—Վայրը՝ Թիֆլիս:—Մանուկյանցից սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա:— Վլադ. Նեմիրովիչ-Դանչենկօ  
«ԿեԱՆՔԻ ԱՐԺԵՔԸ»

Դրամա շորս գործողութեամբ  
Թարգմանութիւն

Ալ. Մուրատրէգեանի:

(Ներքմում նույնը գրված է ոռուսերեն լեզվով):

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## (Սկզբի պահպանակի 1-ին էջում)

Աղաւաղած է և հարազատ չէ թարգմանութեան բնադրի հետ: Ալ. Մուրատրէգեան (Կեց զանազան էջերում՝ 1ա, 2ա, 18ա, 37թ, 49ա և 68ա հնիքով տպված է հետևյալ անունը՝ Ա. Մ. Խիրարեան):

## № 184

## ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Թերեւը՝ 66.—Պրակիներ՝ 4, յուրաքանչյուրը 18 թէրթից:—Մեծուրյունը՝ 22×18×0,7 սմ.:—Նյուրը՝ բարակ թուղթ:—Կազմը՝ մոմաթուղթ ծածկված ստվարաթուղթ:—Պահպանակներ՝ սկզբից և վերջից մեկական թէրթ թուղթ:—Վիճակը՝ սկզբից բայցայված:—Գրուրյունը՝ միայնուն:—Տողեր՝ 20:—Գծումները՝ թուղթը ինքնին գծաւոր է:—Գիրը՝ շեղագիր:—Գրիշը՝ Ալ. Մուրատրենցյան:—Ժամանակը՝ 1896 թ:—Վայրը՝ Թիֆլիս:—Մանուկյանցից սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

## Թ. 1ա:— Ն. Օ. Բակշանին

«ԿՐՔԻ ԲՈՆԿՈՂԻՄՆ»

Դրամա 4 գործողությամբ  
Թարգմանեց ոռուսերէնից Ա. Մուրադի գլուխանի:

(Նույն էջում նույն տեքստը գրված է ոռուսերենով, ինչպես նաև այն մասին, որ սույն դրաման հրատարակվել է «Արտիստա» 12-րդ համարում: Կա նաև երկու տող ոռուսերենով մի գրություն, ինչպես նաև 80 կոպեկանոց դրոշմանիշ, վրան 1896 թ. գրված):

Թ. 60թ:— (Դրամայի վերջագործության կաթարգմանիշ-գրչի ստորագրությունը՝ Ալ. Մուրատրենցյան):

## ՀԵՇԱՏԱԿԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

թ. 1ը.—Կա 10 տող գրություն՝ ոռուսերն լիզվով՝ դրված. Գրության թվականն է 18 նոյեմբերի 1896 թ., դրված թիֆլիս քաղաքում):

№ 185

### ՄԱՅՐ ՏՕՄԱՐ

Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ

Թերերեր՝ 382 (381 + թերթ 217ա)։—Պրակիներ՝ 32, յուրաքանչյուրը 12 թերթից։—Մեծուրանը՝ 50×35,5×4,5 մմ.։—Նյուրը՝ սպիտակ բարակ թուղթ, կազմը՝ կաշեպատ սովորաբուղթ։—Պահպանակները սկզբից 3, իսկ վերջից 2 թերթ թուղթ։—Վիճակը՝ բարձրար։—Գրույրունք՝ միասյան։—Տողեր՝ փոփոխական, 2-3 տողից մինչև 34 տող։—Գծումներ՝ առանց անշանու։—Դիրք՝ շեղագիր։—Զարդարություն՝ չկա։—Գրիչը՝ անհայտ։—Պատվիրատոն՝ Գնորդ Դ Կաթողիկոս Ամենայն Հայոց։—Ժամանակը՝ 1874 թ.։ Տ. Մակար, Տ. Մկրտիչ և Տ. Մատթեոս կաթողիկոսների ժամանակ ևս կատարվել են բազմաթիվ լրացումներ։—Վայրը՝ Ս. Էջմիածնի վանք։—Մանուրույրունք՝ սույն ձևագիրը հանդակ է վայր և բնուի արխիվից։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 4ա-5բ.։—Գնորդ Դ Կաթողիկոսի 1873 թվականի դեկտեմբերի 6-ի կոնդակը, որի մեջ գրում է եկեղեցական իրերի անմիտիթար վիճակի, թանգարանի երեք սենյակների շինության (1869 թ.), արծաթեղենի և սուկեղենի վարդերի և այլ իրերի նորոգության, նույնօրինակ երկու տոմարների պատրաստման, եկեղեցական բոլոր իրերի, զարդերի և հնությունների ցուցակագրման, համարակալման և հատուկ պահարաններում ցուցագրման, բանալինների պահպանման մասին, ինչպես նաև պատվեր գալիք սերունդներին՝ թանգարանն ու իրերը սրբությամբ պահելու համար։

Թ.թ. 6ա-363բ.։—Թանգարանի և Մայր Տաճարի սպասների, իրերի, զարդերի բնոհանուր ցուցակի, բաժանված 86 անվան տակ, որոնց պիտի սպասները հետևյալներն են։

Թ.թ. 13ա.։—Աշտանակներ (79 հատ)։

Թ.թ. 29ա.։—Մագաղաթյա և թղթյա ձեռագիր և տպագիր Ավեսարաններ (75 հատ), որոնցից 34 հատը՝ № 1, 5, 6, 7, 10, 12, 13, 23, 24, 25, 27, 28, 30, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 44, 45, 53, 59, 60, 61, 67, 68, 69, 70 և 74 ձեռագիր Ավետարաններ են։

Թ.թ. 44ա.։—Բազմաններ (56 հատ)։

Թ.թ. 61ա.։—Գավազաններ (96 հատ)։

Թ.թ. 96ա.։—Պսկիչ դրամներ (71 հատ)։

Թ.թ. 102ա.։—Արծաթյա դրամներ (432 հատ)։

թ. 110ա.։—Պղնձյա դրամներ (410 հատ)։  
թ. 128ա.։—Թագեր (74 հատ)։  
թ. 139ա.։—Ժամացույցներ և այլ հնություններ (11 հատ)։

թ. 141ա.։—Խաչերի և պահարանների մեջ ամփոփված Ս. Գեղարդ, Կենաց փայտի մատունքներ, աջեր և սրբոց մատունքներ (163 հատ)։

թ. 155ա.։—Զանազան շափսերի ոսկի և արծաթյա խաչեր (347 հատ)։

թ. 179ա.։—Վեղարի և պարտուոցի խաչեր (21 հատ)։

թ. 204ա.։—Կաթողիկոսական, եպիսկոպոսական և այլ կոկոններ (59 հատ)։

թ. 217ա.։—Ձեռագիր և տպագիր Մաշտոցներ (205 հատ), որոնցից № № 1, 2, 3, 4 և 5 ձեռագիր են։

թ. 218ա.։—Մատանիներ, զանազան կաթողիկոսների և եպիսկոպոսների (31 հատ)։

թ. 222ա.։—Տաճարի մատյանները, որոնք գտնվում են ավագ լուսարարի մոտ (36 հատ), որոնցից մեկը ձեռագիր է (№ 30)։

թ. 253ա.։—Թանկագին շուրջառներ (161 հատ)։

թ. 264ա.։—Հասարակ շուրջառներ (95 հատ)։

թ. 274ա.։—Զանազան պետական շքանշաններ (27 հատ)։

թ. 282ա.։—Պատկերներ և զարդեր (59 հատ)։

թ. 290ա.։—Հայրապետական պանակեններ և արծիվներ (14 հատ)։

թ. 300ա.։—Սկիճներ և մաղղմաններ (48 հատ)։

թ.թ. 378ա-379ա.։—«Յանկ պարունակութեանց տօմարիս»։

Տրվում է ցուցակագրված 86 անուն իրերի, սպասների, զարդերի և այլ իրերի ցուցակը։

Գլխավոր իրերն ու սպասները մանրամասն կերպով նկարագրված են, թե դրանք որտեղից են բերված, ո՞վ է բերել, ո՞վ է նվիրել, ո՞մ է տրվել և այլն։

### ՀԵՇԱՏԱԿԱՆԱՐԱՆՆԵՐ

թ. 1ա.։—Մայր Տումար պահպաննեալ ի թանգարանի։

թ. 4ա.։—(Գնորդ Դ Կաթողիկոսի հայրապետական կոկոն, կարմիր)։

Գնորդ Դ Սպիտակպասապետ և Կարողիկոս Ամ. Հայոց. ՌՅՃԵ=1866։

թ.թ. 4ա-5բ.։—(Տրվում է կոնդակի լրիվ անբար և Կաթողիկոսի ստորագրությունը)։

Գրեցաւ ի վեցն գեկտեմբերի հազար ութին հարիւր եօթանասուն և երեք ամի Փրկչական և ի հե Տրէ ամսեան ՌՅԻԳ ազգային թուականի, ի Կաթողիկոսարանն Ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին, ի Վաղարշապատ։

Թ. 357բ.—Վեհափառ Տ. Տ. Գէորգ Դ Կաթոլիկոսն Ամենայն Հայոց ի մէջ անթիւ ազգային և եկեղեցական բարեկարգութեան գործոց տեսանելով՝ զի և շապիկք և ուրարք վկայից յատկացելոյ յատուր ձեռնադրութեան եպիսկոպոսի ի Մայր Տաճարի Սուրբ էջմիածին՝ մաշեալք են և կարկատեալք, քանզի դպիրք ի հնումն անխտիր ի գործ եղեալք են յեկեղեցական այլ արարողութիւնս. վասն որոյ ի նորոյ պատրաստեաց գեղեցկագոյնս և վայելուս մետաքսեայ և ծաղկեայ կերպաս շապիկս և ստօֆալ ուրարս, զորս և պատուիրեաց պահել առանձինն ի թանգարանի Աթոռոյս վասն յատկապէս գործադրելոյ միայն յատուր ձեռնադրութեան եպիսկոպոսաց, և են այսորիկ (տրվում է ցուցակը):

Թ. 358ա.—1881 մայիսի 12:

Թ. 359բ.—(Գնդեվանքի հնությունները, որոնք Գէորգ Դ Կաթողիկոսի հրամանով բերված են Ս. էջմիածին):

Այն ինչ Վեհափառ Տ. Տ. Գէորգ Դ Կաթոլիկոսն ամենայն Հայոց ի թիւս ազգի ազգի բարերար մեծագործութեանցն յօգուտ և ի փառա Հայրենեաց և եկեղեցւոյ՝ հոգայր նաև զմեծափառ յիշատակարանաց՝ նախնեաց՝ գոյակապ վանօրէից ասեմ և զմենաստանաց, և հեռատես տնօրինութեամբ իմն կարգադրէր զնորոգութիւն մէն մի վանօրէից Հայաստանի, զոր օրինակ բազում շանիւք ի հիմանց նորոգ կառոյց զՍուրբ Խաչ եկեղեցին Արկազու, որ է ուխտատեղի, և բարեկարգելով զվանս Յովհաննու Որոտնեցւոյ որ ի Սիւնիս՝ կարգելով վանահայր և միաբանութիւն ի նմա, նոյնպէս և զՄակարայ վանս Գուգարաց, Ուշույ Սուրբ Մարգսի վանս և զայլս բարեկարգեաց և հաստատեաց զմիաբանութիւնս: Յովհաննէս վարդապետ Տաթեացի յամին 1872, շարժեալ ի նոյնպիսի կարգադրութեանց՝ գնաց նորոգել զՍուրբ Նախավկայի վանս (ոչ ի Պարսկաստանի եղեալն, այլ) Վայոց-Զորոյ՝ անուանեալն Գնդեվանք, որ շինեալն է ի Սովիթ կնոջէ Սմբատ իշխանի Սիւնեաց՝ ի թուին Հայոց 32 այն է յամի Տեառն 936, առ եղիշէ Ա. Կաթոլիկոսաւ, որոյ շինութեան արձանագիրն է ըստ այսմ «Ես Սովիթ տիկին՝ կին Սմբատայ Աստուածապահ» տեառն Սիւնեաց և դուստր Գրիգոր Դիրենիկի շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգոյ իմոյ. անակն մատանի էր Վայոց-Զոր, շինեցի զսա և եղի ակն ի վերայց: Որպէս գրէ Ստեփանոս եպիսկոպոս Օբբէեան ի Պատմութեան Սիւնեաց Գլուխ Ս, յերես 306, ըստ Փարիզեան տպագրութեան: Յիշեալ Յովհաննէս վարդապետն ի նորոգելն զՏաճար վանիցն և զսենեակս միաբանութիւն ևս և զպարիսապն՝ գտեալ էր յամին 1875, առ դրան սենեկաց զերիս զանգակս եկեղեց-

ւոյ, և ի մէջ Հորոյ միոյ զբանի մի պղնձեայ անօթեղէնս, զորս յայսմ 1881 ամի, ըստ Հարամանի Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց երեր այսր ի Սուրբ էջմիածին, զերկուսն միայն ի զանգակաց և զայլս յիշեալ Յովհաննէս վարդապետն, որք և արձանագեցան յերկուս տօմարս, ի Մայր Տօմարի Բանգարանի Աթոռոյս՝ որ և ի Վեհարանի մնայ նոյն և նման նորին, և ունին նշանակել իրաքանչիւրն յիւրում տեղուց:

Զանգակ եղեկեցւոյ շափաւոր մեծ մի զոյգ՝ միանման որ կախեալ կայ ի զանգակատան Սուրբ էջմիածինի հարաւակողմն, յ. որց վերայ միանման գրչութիւն յիշատակարանի այսպէս. «Ճիշտակ է Գնդեվանի Սուրբ Նախավկալին, թվ. ՌՅԽ», որ է յամի Տեառն 1691, առ նահապետ Կաթողիկոսաւ):

(Ապա տրվում է բերված մյուս իրերի ցուցակը):

### ՀԱՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թանգարանի Մայր Տօմարը կազմվելուց հետո հետագայում կատարվել են բազմաթիվ լրացումներ, Գևորգ Դ, Մակար, Մկրտիչ, Մատթեոս Բ կաթողիկոսների և նույնիսկ այս վերջնուու վախճանումից հետո Օրինակե համար, 1871 թվականին Մեսրոպ վարդապետ Մերատայանց նախշեանցին, Գևորգ Դ Կաթողիկոսին նվիրում է մի ձեռագիր մազարային Ավետարան, գրված Հայոց ՈԿ (1211) թվականին): Տեսնել թ. 32ր, № 59; Ներքին վուս ավելացված է հետևյալը.

Թ. 32ր. . . «Կ նովալ թանգարանի Ս. էջմիածինի յիշատակ ծնօղաց իրոց, ըստ յիշատակագրույն՝ որ ի կողու Աւետարանին»:

Թ. 149բ.—(№ 128 արձաթյա խաչի տակ գրված է).

Ի 19 ապրիլի 1903 ամի զոյն զայս խաչ հանեալ ի ներքին մասաց խորանէն, ամփոփեցաւ ի նմա Ս. Մասն նշխարաց Ս. Առաքելոյն Թագէոսի և յղեցաւ նուէր ի կողմանէ Վեհափառ Տ. Մկրտիչ Կաթողիկոսէ առ բարեպաշտուն Պ. Աղքասանոր Յ. Մանթաշեան ի Տիփիս:

Թ. 180ա.—№ 19 պարանցի վարդապետական թանգարժեք խաչը, որը զարդարված է բազմաթիվ զմրուխտ, հակինթ և ալմաստ արժեքավոր բարերով, նվեր է տրրված հտալիու թագավորի տղին: Խաչի նկարագրականի կողքին, լուսանցքում, գրված է հետևյալը).

Մանօթութիւն. Այս խաչ ի գալստեան արքայորդւոյ հտալիու զետեղելով զմասն ի կենաց փալտէն ընծայեցաւ նորին Արքայական թարձութեան ի կողմանէ Վեհափառ Հայրապետի ազգին, ի 23 ապրիլի 1890 ամի:

(նույն էջում գրված է).

20. Վարդապետական խաչ ականակուռ շղթայով.

21. Համալսարանական նշան:

20 և 21 յօդ. Նահապետ եպիսկոպոսի նահապետական ի 24-ն հոկտեմբերի 1906 ամի:

Թ. 331բ.—(№ 20 համարի տակ գրված է)..

Տուփ սկիեալ ձուաձև ճաճանշաւոր ծաղկօր և զծովք զարդարեալ մի հատ, պատկանեալ ի Տէր հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի:

թ. 363ր.—(№ 418—432 համարների տակ դրանցված 15 արձաթյա զրամները նվիրել է Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարյանը, որի համար կա հետայիւ հիշատակագրությունը)։

Ալսորիկի դրամք նույրեալք են ի Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարյան, ի 1887 ամի։

### № 186

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՅԱՆ

##### (Պարսկերեն)

Թերերը՝ 137:—Պրակեները՝ 19, Ա.-ը 10 թերթ, Բ՝ 20, Գ՝ 8, Դ՝ 36, իսկ մնացալ 15 պրակեներից յուրաքանչյուրը 4-ական թերթ:—Մեծուրյունը՝  $35,5 \times 22 \times 1,5$  սմ.:—Նյուրը՝ հասարակ սպիտակ թուղթ:—Կապմք՝ թղթով ծածկված սովորաբուղթ:—Պահպանակները՝ սկզբից մի թերթ հասարակ թուղթ:—Վիճակը՝ անբավարար: Պրակեները բաժանվել են միմյանցից:—Գրույրը՝ միասյուն:—Տողերը՝ փոփոխական, 14—24 տող:—Գծումները՝ առաջին մասը առանց ճնշման, իսկ երկրորդ մասը ճնշումով:—Գիրը՝ պարզ ձեռագիր:—Զարդարություն՝ չկա:—Գրիչը՝ Ալի թերթ Վալիֆ:—Ժամանակը՝ 1809 թ.:—Վայրը՝ Շոշի (Լենային Ղարաբաղ):—Մանուրույն՝ սույն ձեռագիրը հանված: է Մայր Աթոռի արխիվից: Զեռագրում կան պարսկերեն լեզվով գրված զանազան վեց թերթեր, դրված զանազան գրիշների կողմէց:

#### ԲՈՎԱՆԴԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 3թ—76ա.—Ատրպատականի վերաբերյալ կալվածների մասին արձանագրությունների մատյան, գրված պարսկերեն լեզվով, 794-ից 1310 Հիշրայի թվականին: Կան ընդամենը 401 արձանագրություններ:

Թ.թ. 78ա—137ա.—Տողի և անասունների վերաբերյալ պարտագրերի պատճենները, գրված պարսկերեն լեզվով, ժ. ժ. ժարերի: Կան ընդամենը 126 վավերագրերի պատճենները:

Հիշրայակարան՝ թ. 137ա:

Հիշրայակարություն՝ թ. 76թ:

### № 187

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՅԱՆ

##### (Պարսկերեն)

Թերերը՝ 76:—Պրակեները՝ 9, յուրաքանչյուրը 8 թերթից:—Մեծուրյունը՝  $22 \times 17,7 \times 1$  սմ.:—Նյուրը՝ հասարակ սպիտակ թուղթ:—Կապմք՝ թղթով ծածկված սովորաբուղթ:—Պահպանակներ՝ չկան:—Վիճակը՝ մի մասը բայրայիշ է:—Գրույրը՝ միասյուն:—Գիրը՝ պարզ ձեռագիր:—Զարդարություն՝ չկա:—Գրիչը՝ Միրզա Ա-բուն խան:—Ժամանակը՝ ժ. գ.՝—Վայրը՝ Թավրիզ:—Մայր Աթոռի արխիվից: Հանված է Մայր Աթոռի արխիվից:

Հանված է Մայր Աթոռի արխիվից: Զեռագրում կան մի ամբողջ տրամակարեն նամակներ, պատճեններ, նույրեր, հաշիվներ, որոնք պատկանել են Խաչիկ վարդապետ Դադյանին, երբ նա 1899 թվականն եղել է առաջնորդական փոխանորդ Ատրպատականի թեմին: Գրույրուններ կան Ատրպատականի գլխավոր գավառներից՝ Խոյից, Սալմաստից, Ուրմիայից, ինչպես նաև Մարաղայից, Շուշուց և Թեհրանից:

#### ԲՈՎԱՆԴԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչիկ վարդապետ Դադյանի և այլոց ուղարկած հեռագրերի և նամակների պատճենները:

#### ՀԻՇՐԱՅԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—Արձանագրությանց ելից մատյան (1899 թվականի հունիս ամիս) գրված պարսկերեն լեզվով:

#### ՀԻՇՐԱՅԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 60ա.—Մակու (գրված հայերեն).

Թ. 67ա.—Խոյ » »

Թ. 75ա.—Մալմաստ » »

### № 188

#### ԱՏՐՊԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱԲԱԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

##### (Պարսկերեն)

Թերերը՝ 38:—Պրակեները՝ 5, յուրաքանչյուրը 5 թերթից, բացառությամբ Բ պրակը, որ 6 թերթ է:—Մեծուրյունը՝  $22 \times 18 \times 0,3$  սմ.:—Նյուրը՝ հասարակ սպիտակ թուղթ:—Կապմք՝ լունի:—Պահպանակներ՝ չկան:—Վիճակը՝ պրակները միմյանցից բաժանվել են: 14ա և 15ա թերթերի մեջտեղից 5 թերթ ընկել է:—Գրույրը՝ միասյուն, գրված է թերթի պահպանակներում:—Տողերը՝ 16:—Գծումները՝ առանց ճնշման:—Գիրը՝ պարզ ձեռագիր:—Զարդարություն՝ չկա:—Գրիչը՝ Միրզա Ա-բուն խան:—Ժամանակը՝ ժ. գ.՝—Վայրը՝ Թավրիզ:—Մայր Աթոռի արխիվից:

#### ԲՈՎԱՆԴԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Ատրպատականի համառոտ աշխարհագրություն: Էջ 28ա-ից մինչև 31ա տրվում են Հողային, կենդանական, հանքային հարըստությունների, շափերի և բանակությունների ըուցակներ:

#### ՀԻՇՐԱՅԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—Հիշրայի 1287 թ.:

Թ. 38թ.—Հիշրայի 1211 թ.:

#### ՀԻՇՐԱՅԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. թ. 2ա, 3թ, 4թ, 9ա, 25ա, 25թ և 35ա:

#### (Շարունակելի)